ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
Շարունակություն 1

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/40 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ջրվեժ «19» օգոստոսի 2022թ.
ժամը 14:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Սանթրոսյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Մարգարյան, Հ.Գրիգորյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/40 ծածկագրով գնանշման հարցման գնահատման մասին

1.Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա. և բ. պարբերությունները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/40 ծածկագրով գնանշման հարցման մասնակիցներ.

- «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի ու «Լայթինգ Ալեք» ՍՊԸ-ի - կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին,
- «Հ.Հակոբյան Շին» ՍՊԸ-ի («Վանդաժի» ՍՊԸ կոնսորցիում) կողմից ծավալաթերթ-նախահաշիվ չի ներկայացվել,
- «Ցենտռա Կոլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևի՝ Հավելված 1.2-ի 1.3.3 կետում բացակայում է հայտարարագիրը ներկայացնողի ստորագրությունը,
- «Վոլտ Ամպեր» ՍՊԸ-ի հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանող սարքերի և սարքավորումների նկարագրում երաշխիքային ժամկետները (Հավելված 1.1) թերի է,

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2.Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը էլեկտրոնային եղանակով ծանուցել անհամապատասխանություններ արձանագրված մասնակիցներին՝ առաջարկելով մինչև 2022 թվականի օգոստոսի 22-ի ժամը 17:30-ն ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3.Նիստը ընդհատվում է մինչև 2022 թվականի օգոստոսի 23-ի ժամը 15:00-ն՝ շտկված փաստաթղթերի հիման վրա հայտերի գնահատման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Սանթրոսյան

Անդամներ՝ Ա.Մարգարյան

Հ.Գրիգորյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան